Հաշվետվություն

2026 թվականի սեպտեմբերի 8-11-ը Չեխիայի Հանրապետություն (Բռնո)
կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Նարեկ Կրոյան, Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության գեոդեզիայի և քարտեզագրության բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Չեխիայի Հանրապետություն (Բռնո), 2026 թվականի սեպտեմբերի 8-11-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Քարտեզագրության միջազգային ասոցիացիա (ICA)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Քարտեզագրության միջազգային ասոցիացիայի (ICA) կողմից կազմակերպվող «EUROCARTO 2026» միջազգային համաժողովին մասնակցելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Միջոցառման շրջանակներում քննարկվել են ոլորտի զարգացման և արդիականացման համար առանցքային նշանակություն ունեցող հետևյալ թեմաները.

   - երկրատարածական տվյալների կառավարման և քարտեզագրության ոլորտի զարգացման ժամանակակից միտումները և ազգային մակարդակում դրանց կիրառման հնարավորությունները,
   - արհեստական բանականության և նորարարական տեխնոլոգիաների կիրառումը երկրատարածական տվյալների մշակման, վերլուծության և քարտեզագրական գործընթացների ավտոմատացման նպատակով,
   - ազգային երկրատարածական տվյալների ենթակառուցվածքների զարգացման, տարածական տվյալների ինտեգրման և դրանց արդյունավետ կառավարման ժամանակակից մոտեցումները,
   - թվային և ինտերակտիվ քարտեզագրական ծառայությունների, վեբ քարտեզագրության և երկրատարածական տեղեկատվության առցանց ներկայացման ու կիրառման նոր լուծումները,
   - եռաչափ երկրատարածական տվյալների, վիրտուալ իրականության և թվային երկվորյակների կիրառմամբ տարածքների և տարածական գործընթացների ներկայացման ու վերլուծության հնարավորությունները,

- երկրատարածական տվյալների համակցման, տարածական և ժամանակային վերլուծության, ինչպես նաև տվյալների որակի և անորոշության գնահատման ու ներկայացման մեթոդները,
- երկրատարածական տվյալների մշակման, քարտեզագրական արտադրանքի ստեղծման և տվյալների որակի վերահսկման գործընթացների կատարելագործմանն ուղղված նորարարական մեթոդներն ու տեխնոլոգիական լուծումները:

6. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Համաժողովի շրջանակներում քննարկումները հիմնականում ուղղված էին քարտեզագրության և երկրատարածական տեղեկատվության ոլորտի արդի զարգացումներին, նորարարական տեխնոլոգիաների կիրառմանը, տարածական տվյալների մշակման և վերլուծության կատարելագործմանը, ինչպես նաև ազգային մակարդակում երկրատարածական տվյալների ենթակառուցվածքների զարգացմանը:

Քննարկումների շրջանակում մասնակիցները կարևորել են՝

- երկրատարածական տվյալների կառավարման և քարտեզագրության ոլորտում ժամանակակից մոտեցումների և տեխնոլոգիական լուծումների կիրառումը՝ տարածական տեղեկատվության արդյունավետ օգտագործման նպատակով,
- արհեստական բանականության և մեքենայական ուսուցման կիրառումը երկրատարածական տվյալների մշակման, վերլուծության, քարտեզագրման և քարտեզագրական գործընթացների ավտոմատացման ուղղությամբ,
- ազգային քարտեզագրական համակարգերի և ազգային երկրատարածական տվյալների ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև տարածական տվյալների և գիտելիքի ինտեգրման անհրաժեշտությունը,
- միջազգային մասնագիտական և ակադեմիական համագործակցության ընդլայնումը, փորձի փոխանակումը և ոլորտի նորարարական լուծումների ուսումնասիրումը:

Համաժողովի ընթացքում Նարեկ Կրոյանը հանդես է եկել Կադաստրի կոմիտեի կողմից պատրաստված «Հայաստանյան ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացման առանձնահատկությունները» ("Features of the Armenian National Spatial Data Infrastructure Development") զեկույցով՝ ներկայացնելով ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Համաժողովի ծրագրում տվյալ զեկույցը ներառված է եղել «From Infrastructure to GeoAI» թեմատիկ նստաշրջանում:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի մասնակիցներին տեղեկացվել է, որ 2027 թվականի հուլիսի 18-23-ը Լեհաստանի Հանրապետության մայրաքաղաք Վարշավայում նախատեսվում է

անցկացնել Քարտեզագրության միջազգային ասոցիացիայի (ICA) 33-րդ միջազգային համաժողովը:

Միաժամանակ, հաստատվել է «EUROCARTO» միջազգային համաժողովի անցկացումը Շվեյցարական Համադաշնությունում՝ 2028 թվականին: Նշվել է, որ համաժողովի վերաբերյալ լրացուցիչ մանրամասները հրավիրող կողմը ներկայացուցիչներին կտրամադրի հետագայում:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Չեխիայի Հանրապետություն կատարած գործուղումը հնարավորություն է ընձեռել ծանոթանալու քարտեզագրության, երկրատարածական տեղեկատվության կառավարման, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքների, GeoAI-ի և տարածական վերլուծության ոլորտներում միջազգային առաջադեմ փորձին և ժամանակակից զարգացումներին, ինչպես նաև ներկայացնելու Հայաստանի Հանրապետության և Կադաստրի կոմիտեի կողմից ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Համաժողովի ընթացքում ներկայացված զեկուցումները և քննարկումները հնարավորություն են տվել ծանոթանալու երկրատարածական տվյալների մշակման և վերլուծության, քարտեզագրական գործընթացների ավտոմատացման, եռաչափ երկրատեսողականացման, արհեստական բանականության և նորարարական տեխնոլոգիաների կիրառման ժամանակակից մոտեցումներին:

Գործուղման շրջանակներում ձեռք բերված մասնագիտական գիտելիքներն ու միջազգային փորձը կիրառելի են Կադաստրի կոմիտեի կողմից ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի զարգացման, երկրատարածական տվյալների կառավարման և քարտեզագրական գործընթացների թվայնացման ու ավտոմատացման աշխատանքներում՝ նպաստելով նորարարական լուծումների ներդրմանը և տվյալների մշակման արդյունավետության բարձրացմանը:

Միաժամանակ, մասնակցությունը նպաստել է միջազգային մասնագիտական կապերի ընդլայնմանը, փորձի փոխանակմանը և Քարտեզագրության միջազգային ասոցիացիայի (ICA) շրջանակներում հետագա համագործակցության զարգացմանը:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Նարեկ Կրոյան 14.09.2026 թ.